

Սեփական Թղթակցութիւն (21. Մարտի 2005 ԺԱՍԱՆԱԿ Օրաթերթէն).
Շաբաթ 19 Մարտի Փրկէմելզոնեանը կայք-էջէն կը տեղանանք, որ Սելզոնեան Կրթական Հաստատութեան(ՄԿՀ)ի առնչեալ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) Գալֆորնիոյ դատավարութիւնը յետաձգուած է Ապրիլ 4ին : Ան տեղի պիտի ունենայ Լոս Անճելէսի քաղաքամէջի դաշնակցային (ֆէտէրալ) ատեանին առջեւ :

X

Նոյն կայք-էջը կազմակերպած է հարցախոյզ մը, որով հարց կը տրուի՝

ըստ առաջարկի, կը կարծէ՞ք, որ ՄԿՀն պէտք է ամբողջովին անկախ ըլլայ ՀԲԸՄէն, որպէսզի Սելզոնեանցիներ կարենան իրագործել Սելզոնեան Եղբարց առաքելութիւնը. առանց ՀԲԸՄի որեւիցէ միջամտութեան :

Պատասխանները ցարդ մեծ մասամբ եկած են Սելզոնեանցիներէն ու կը խմբուին հետեւեալ կերպով.

Համաձայն՝ առանց ՀԲԸՄի 300 Հոգի = 85%

Անհամաձայն՝ ՀԲԸՄէն անկախ գործունէութեան 44 հոգի = 12.5 %

Անորոշ կամ վիճելի 9 հոգի = 0.5%

Pro Edvcatio այդ առնչութեամբ միշտ առաջադրած է հետեւեալը՝.

ՄԿՀ՝ն սփիւռքահայոց միջազգային վարժարան է. բոլոր հայ տղոց համար, առանց հաշուի առնելու անոնց տնտեսական եւ ընկերային վիճակը : Սելզոնեանցիներն անտարակոյս եւ բնականաբար ոգեւին ատելի մօտ են հաստատութեան : Նոյնն է պարագան Կիպրոսաբնակ Հայոց : Սակայն ոգեկան տարրը բաւարար չէ, որ Սելզոնեանցիներու եւ կամ Կիպրահայոց մատակարարութեան յանձնուի ՄԿՀն : Նախընտրելին կրնայ ըլլալ ՀԲԸՄը, որպէս կտակակատար-մատակարար, եթէ ՀԲԸՄը կատարէ իւրաքանչիւր տարեշրջանի գործունէութեան հանրային հաշուետւութիւնը. անկախ հաշուեքննիչներու ենթարկուելով : Սելզոնեանի անցեալէն եկող այժմու տաքնասպին լուծումը ՀԲԸՄը չէզոքացնել չէ. այլ ՄԿՀի կրթական եւ վարչական մատակարարութիւնը առողջացնելն է, հաստատութեան տեսականութիւնը երաշխատրելու ի խնդիր : Եթէ ՀԲԸՄը իւրայատուկ պատճառներով ընթացք չի տար այդ առողջացման (ինչ որ ներկայ Կեդրոնական Վարչութեան այժմու կեցուածքն է), նախընտրելի է հայկական տարբեր հոսանքներու պատկանողներու հոգաբարձութեան մը յանձնուի մատակարարութիւնը. բայց ոչ միայն Սելզոնեանցիներէ կազմուած :

*Pro Edvcatio*ն, յայտնելով հանդերձ սոյն առաջադրութիւնը, հանրութեան ուշադրութեան կը յանձնէ այն իրականութիւնը թէ՛ ներկայիս առաջնահերթ

չէ Մելգոնեանցիներու կամ այլոց ապագայ մատակար քլլալը. այլ ըստ Մելգոնեան կտակին ստուգել իրաւատէրը ՄԿՀին, ի հեճուկս ՀԲԸՄի յաճախակի լռութեան եւ հատ ու կենտ պնդումներուն :

Յամենայն դէպս, Pro Edvcatioli չունի հոգաբարձու-մատակարարի ռեւէ թեկնածու, ունենալով հանդերձ ՄԿՀ՛էն շրջանաւարտ անդամներ :